ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/23» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴ (ԷԱՃ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

12.02.2019թ.
ժամը 17^{00}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա. Նազարյանը,
Գնահատողներ՝
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ. Վահանյանը,
ՀՀ ՋՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ, Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական Հ. Ավետիսյանը,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ, ՔՀԾ 1-ին դասի առաջատար ծառայող Մ. Հոխեյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/23» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ. Հոխեյան)

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության և դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ ԷԱՃ ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերի առկայության, դրանց ԷԱՃ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Մ. Հոխեյան)

1.1 ***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ն, «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ» ՍՊԸ-ն, «ՋԻ ԹԻ ՍԻ» ՍՊԸ-ն և «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:***

1.2 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված՝ առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերն առկա են, և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին բացառությամբ նեքոհիշյալ դեպքերի.

- «Նատալի ֆարմ» ՍՊԸ կողմից 4-րդ և 11-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքների տեխնիկական բնութագրերում (Հավելված 3) անհրաժեշտ է հստակեցնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի մաս կազմող տեղեկատվությունը՝ մասնավորապես՝ Ապրանքները պետք է ունենան. 1. Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային (ISO, GMP, CE Mark և այլնլ) կամ ներքին (օր. ГОСТ, ТУ և այլն) հավաստագիր /հստակ նշել հավաստագրի տեսակը /որակի վերահսկման միջազգային (ISO, GMP, CE Mark և այլն) կամ ներքին (օր. ГОСТ, ТУ և այլն) հավաստագիր//: Թիվ 1 (Արտադրողին տրված՝ արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային (ISO, GMP, CE Mark և այլն) կամ ներքին (օր. ГОСТ, ТУ և այլն) հավաստագիր) կետով պահանջվող հավաստագրի պատճենը ներկայացվում է ապրանքների մատկարարման ժամանակ:
- «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից՝ 10-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 51-րդ, 52-րդ և 56-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքի (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր Հավելված 3) «արտադրողի անվանում» սյունակը լրացված չէ, /նշված չէ «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների արտադրողի անվանումները/: 10-րդ չափաբաժնի մասով ներկայացված ապրանքի անվանումը /Հավելված 3/ անհրաժեշտ է հստակեցնել «Սոնոգել կամ համարժեք ուլտրաձայնային հետազոտությունների դոնդող 250 գ»՝ բացառելով «կամ համարժեք» արտահայտությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը և ծանուցել մասնակիցներին անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ: Վերոնշյալ մասնակիցները սահմանված ժամկետում շտկել են անհամապատասխանությունները: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 1-ին ենթակետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց «ԼԵՅԿՈ» ՍՊԸ, «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ» ՍՊԸ, «Ջի Թի Սի» ՍՊԸ և «Նատալի ֆարմ» ՍՊԸ կողմից Eauction համակարգի միջոցով ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը, Հավելված N2-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում) և Հավելված 3-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) գնահատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/23» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան:

1.3 12.02.2019թ. հիմք ընդունելով էլեկտրոնային գնահատման արդյունքները և հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «ԼԵՅԿՈ» ՍՊԸ-ի, «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ» ՍՊԸ-ի, «Ջի Թի Սի» ՍՊԸ-ի և «Նատալի ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը և հրավերով պահանջվող փաստաթղթերը գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ այն չափաբաժիններում, որտեղ նրանք ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող մասնակից և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

Հանձնաժողովը 12-րդ, 20-րդ, 25-րդ, 26-րդ 29-րդ, 36-րդ, 37-րդ, 39-րդ, 40-րդ, 41-րդ, 43-րդ, 49-րդ, 53-րդ, 54-րդ, 60-րդ և 61-րդ չափաբաժինների մասով ընթացակարգը հայտարարել է չկայացած հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը (ոչ մի հայտ չի ներկայացվել), իսկ 1-ին, 2-րդ, 3-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 22-րդ, 27-րդ, 28-րդ, 30-րդ, 31-րդ, 32-րդ, 33-րդ, 34-րդ, 35-րդ, 38-րդ, 44-րդ, 45-րդ, 46-րդ, 47-րդ, 48-րդ, 50-րդ, 55-րդ, 57-րդ, 58-րդ և 59-րդ չափաբաժինների մասով՝ 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

1.4 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/23» ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ. Հոխեյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/23» ծածկագրով ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագրերի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 11^{30}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Նազարյան
Գնահատող		Վ. Վահանյան
Գնահատող		Մ. Գալստյան
Գնահատող		Հ. Ավետիսյան
Գնումները համակարգող		Մ. Հոխեյան